Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 27

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Տ. Գալստյանը, Ա. Զաքարյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Հունանյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Բ. Վարդանյանը, Հ. Վարդանյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Վ. Սաֆարյանը, Գ. Եղիազարյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ քաղաքի Ս. Սարգսի փողոցի N 73 և N 73/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

3. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ. նիստի որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 23.11.2018թ. N 4-Ա որոշման հավելված 1-ի մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ.-ի հմ. 2-Ա <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2019թ.-ի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին>> որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

9. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

10. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 9 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Տ. Գալստյանը և Ա. Հունանյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ քաղաքի Ս. Սարգսի փողոցի N 73 և N 73/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Ս. Սարգսի փողոցի N 73 և N 73/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը ձեռք բերելուն:

Ներկայացվածի շուրջ ելույթներով հանդես եկան և զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Ա. Խաչատրյանը, Կ. Շահազիզյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը և Ա. Հունանյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց փոփոխություն կատարել համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում:

Զեկուցողը նշեց, որ նշված փոփոխության անհրաժեշտությունն ուղղակիորեն կապված է ներկայացված նախորդ հարցի հետ, քանի որ ի սկզբանե նախատեսված չի եղել նման գույք ձեռք բերել:

Զեկուցողին հացեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց սպառիչ պատասխաններ տրվեցին Շ. Վահանյանի կողմից:

9 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը և Ա. Հունանյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Տ Ի Ն - 4 - *Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի առաջին եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շ. Վահանյանը և առաջարկեց ի գիտություն ընդունել համայնքի 2019 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, որոնց Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 5 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը և առաջարկեց գույքահարկի և հողի հարկի գծով հարկային արտոնություն տրամադրել Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի: Միաժամանակ նշեց, որ արտոնությունները տրամադրվում են տույժերի մասով՝ մայր գումարները վճարելուց հետո:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Տ. Գալստյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Տ Ի Ն - 6 - *Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ. նիստի որոշումներում փոփոխություններ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը:

Զեկուցողը նշեց, որ առաջացած խնդիրը տեխնիկական բնույթի է և առաջարկեց Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ. նիստի <<N 1-Ա, N 2-Ա, N 3-Ա, N 4-Ա, N 5-Ա, N 6-Ա, N 7-Ա, N 8-Ա, N 9-Ա>> որոշումների համարները փոխարինել համապատասխանաբար հետևյալ համարներով՝ <<N 8-Ա, N 9-Ա, N 10-Ա, N 11-Ա, N 12-Ա, N 13-Ա, N 14-Ա, N 15-Ա, N 16-Ա>>:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, որոնց Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 7 - *<<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 23.11.2018թ. N 4-Ա որոշման հավելված 1-ի մեջ փոփոխություններ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց փոփոխություն կատարել <<Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի

հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> Աշտարակ համայնքի ավագանու 23.11.2018թ. N 4-Ա որոշման հավելված 1-ի մեջ:

Զեկուցողը նշեց, որ նշված փոփոխությունը կատարվում է սոցիալական աշխատողի հաստիքը համալրելու նպատակով:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը, որոնց Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Հարցի հետ կապված լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 8</u> - Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ.-ի հմ. 2-Ա <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2019թ.-ի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին>> որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը և առաջարկեց փոփոխություն կատարել Աշտարակ համայնքի ավագանու 21.03.2019թ.-ի հմ. 2-Ա << Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով 2019թ.-ի բյուջետային ֆինանսավորման ծրագրերին մասնակցելու համաձայնություն տալու մասին>> որոշման մեջ, մասնավորապես, <<Աշտարակ համայնքի հին շուկայի տարածքում պուրակի կառուցում>> բառերը փոխարինել <<Աշտարակ համայնքի հին շուկայի տարածքում պուրակի կառուցում և քաղաքային զբոսայգու վերականգնման>> բառերով:

Զեկուցողը նշեց, որ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունն առաջացել է այն պատճառով, որ սուբվենցիոն հայտի մեջ ներառվել է նաև <<Կոմիտասի անվան զբոսայգու>> տարածքի բարեկարգման, կանաչապատման աշխատանքները:

Նախագծի շուրջ հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, որոնց Գ. Եղիազարյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն - 9</u> - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Արայի տեղամասում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հասարակական կառուցապատման փոխելուն:

Զեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Ա. Սարգսյանը. Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը, Բ. Վարդանյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Տ Ի Ն - 10 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Օրակարգի վերջին հարցը ևս նեկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելուն:

Զեկուցողը նշեց, որ նախկինում սխալ քարտեզագրման արդյունքում նշված հողատարածքը հաշվառումից դուրս է մնացել, ուստի անհրաժեշտություն է առաջացել այն համայնքային սեփականություն ճանաչելու:

Զեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Սարգսյանը, Ա. Հունանյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2019 թվականի ապրիլի 23-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	**ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	**ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ**
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	**ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	**ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	**ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ**
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ